Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ <<Սաների մեջ ինքնուրույնության,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում>>

Հաստատություն ՝ Ք.Երևանի հ.85 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Ամալյա Մանուկյան

Ղեկավար ՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3
Սաների մեջ ինքնուրույնության,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում…….....4
Եզրակացություն……10
Գրականության ցանկ……11

Ներածություն

Կերպարվեստային գործունեությունը նախադպրոցականների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից է:Նախ և առաջ ցանկանում եմ նշել,որ կերպարվեստային գործունեության նպատակն է զարգացնել երեխաների գեղագիտական ճաշակը,իրական երևույթների և առարկաների նկատմամբ ձևավորել հուզազգացմունքային վերաբերմունք,զարգացնել գեղարվեստաստեղծագործական ունակությունները,նպաստել երեխաների ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը,ստեղծագործական և կառուցողական մտածողությանը,գեղագիտական ընկալումների զարգացմանը:
Շատ կարևոր դեր և նշանակություն ունի կերպարվեստային գործունեությունը նախադպրոցական տարիքի երխայի զարգացման գործում:
Ստեղծել երեխաների համար ազատ,անկաշկանդ միջավայր ինքնուրույն աշխատելու,ստեղծագործելու,երևակայելու համար:
Նախադպրոցական տարիքի երեխաների համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է որքան խաղը:
Ոչ ավանդական նկարչությունը արվեստ է ,որը հիմնված չէ ավանդույթների,օրենքների վրա և հենց դրանով էլ առանձնանում է մյուս մեթոդիկաներից իր ինքնատիպությամբ և յուրօրինակությամբ:Ոչ ավանդական նկարչությունը գրավում է նախադպրոցական տարիքի երեխաներին ` հիացնում,զարմացնում և զարգացնում է նրանց:Այս նկարչությունը նկարելու մի ձև է որը չունի հստակ սահմաններ և արգելքներ ` այստեղ նկարչության գործիք են դառնում ցանկացած իրեր:Այստեղ օգտագործվում են անսովոր նյութեր:Այս մեթոդը երեխաներին սովորեցնում է ազատորեն իրագործել իրենց գաղափարները ` առանց որևէ սահմանափակումների և միաժամանակ նպաստում է երեխաների ինքնուրույնաության և նախաձեռնողականության զարգացմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է որքան խաղը:Նկարչությունը ոչ միայն երեխաների զգացմունքների արտահայտումն է ,այլ նաև միջոց ՝ ճանաչելու շրջապատը ,բնական երևույթները,առարկաները և այլն:
Նկարչությունը նաև կատարում է զարգացնող դեր ՝ հարստացնում է և ճշգրտում է երեխաների աշխարհընկալումը:
Կարելի է նկարչությունը դիտարկել ,որպես ինքնատիպ խաղ և ասել,որ հենց դա է պատճառը ,որ սովորեցնելով երեխային նկարել,չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից,այլ հակառակը , նպաստել որ երեխան ստեղծագործի ինքնուրույն,ազատ և ինքնավստահ:
Նկարչություն միջոցով լուծվում են հետևյալ շատ կարևոր խնդիրները ՝
* սովորեցնել տեսնել,դիտել ու զգալ շրջապատող աշխարհը
* հարստացնել զգայական փորձը՝ տեսողական,լսողական,շոշափելիքի զգացողությունը,
* կարողանալ բնութագրել առարկաները ՝ ըստ գույնի,ձևի,չափի
* կարողանալ բացահաղտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ,
* ծանոթացնել լայնություն,բարձրություն,մեծություն հասկացություններին,
* զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու,դիտելու,համեմատություններ և վերլուծություններ անելու,դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու,ընդհանրացումներ անելու ունակությունը:Այսպիսով կարող ենք ասել ,որ գեղագիտական դաստիարակությունը նպաստում է ՝
* նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը,
* զգայական փորձի հարստացմանը
* իմացական գործունեության ակիվացմանը
* երեխայի ընդունակությունների բացահայտմանը
* անձնային կարևոր հատկությունների ձևավորմանը
* երևակայության զարգացմանն ու կատարելագործմանը:
Կերպարվեստային պարապմունքների առաջ դրված խնդիրները կարելի է լուծել նաև ոչ ավանդական նկարչության տարբեր տեխնիկաների միջոցով:Ոչ ավանդական գործունեության մեջ երեխան ազատ է նյութերի և միջոցների ընտրության մեջ:Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու առարկաների և երևույթների պատկերման ոչ ավանդական,ոչ սովորական պատկերման ձևերին:
Աշխատելով տարբեր արտահայտչամիջոցներով ՝ գունավորված մատիկներով,ճմռթված թղթով,հաստ վրձնով,փրփրապլաստով,կարտոֆիլով,ոպունգով,խցանով,տերևով,օճառի պղպջակներով,խմորով,ձվի կեղևով և այլ միջոցներով,երեխան տարբեր նյութերի ՝ ասեի,ծառի տերևի,գունավոր կամ սպիտակ թղթի,փուչիկների վրա կարող է ստանալ հարթ և անհարթ մակերեսներ:
Ձևերի և միջոցներ բազմազանությունը ստիպում է փոքրիկին հաղթահարել հանդիպող խոչընդոտները և անընդհատ ինչ-որ բան հորինել:Նկարչության այս տեսակը հանարավորություն է տալիս ՝
* ընդլայնելու պատկերացումները տարբեր նյութերի այլընտրանքային նշանակության և
* դրանք որպես գեղարվեստական արտահայտչամիջոց կիրառելուն:

Ոչ ավանդական նկարչությունը ևս շատ կարևոր նշանակություն ունի նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում:Ոչ ավանդական

նկարչության տեխնիկայի օգտագթրծումը հնարավորություն է տալիս երեխաների մոտ զարգացնել ոչ թե բանաձևային ,այլ գեղարվեստական մտածողությունը:Կարևոր չէ ,թե որքան լավ է երեխան տիրապետում նկարչության տեխնիկային,որովհետև այստեղ գլխավորը երեխաներին սովորեցնելն է մտքերը և զգացմունքները թղթի վրա դնելը և տարբեր գույների օգնությամբ փոխանցել իրենց տրամադրությունը:
Դեռ շատ վաղ տարիքից երեխաները փորձում են իրենց նկարներում պատկերել շրջապատող աշխարհի մասին իրենց տպավորությունները:
Ոչ ավանդական նկարչությունը շատ զվարճալի ` կարելի է ասել խաղային գործունեության մի ձև է ,որը զարմացնում է և ուրախացնում է բոլոր տարիքի երեխաներին:Հետևաբար նման պարապմունքներ կազմակերպելիս պետք է հաշվի առնել այն,որ պարապմունքը լինի այնպիսին,որ յուրաքանչյուր երեխա կարողանա ստեղծագործել յուրովի,ցուցաբերի իր անհատական ունակությունները,իր կարողությունների սահմանում կատարի աշխատանքը՝ որքան հնարավոր է ինքնուրույն,քանի որ հենց ինքնուրույնությունից է բխում տվյալ երեխայի երևակայության,մտածողության մակարդակը:
Այս մեթոդիկայի իրականացման ընթացքում օգտագորշվում է ամեն բան,որից էլ հենց առաջանում է մեծ հետաքրքրություն,ուրախ տրամադրություն,օրնակ ` ատամի խոզանակ,բամբակե պայտիկներ,սպունգ,քարեր,մոմ,թելերի կտորներ,մոմե մատիտներ,կարտոֆիլով տպիչներ,սերմեր և տարնբեր այլ հետքրքիր նյութեր:
Տեխնիկան երեխաներին գրավում է նրանով,որ այս պարապմունքների ընթացքում չկա <<ոչ>> բառը ` երեխան կարող է նկարել ինչ ուզում է,ինչպես ուզում է :Այս պարապմունքի ընթացքում երեխաների մոտ առաջանում է դրական հույզեր:
Ոչ ավանդական նկարչության տեխնիկայի օգտագործման միջոցով `
* թեթևանում են երեխաների վախերը
* զարգանում է ինքնավստահությունը
* զարգանում է տարածական մտածողությունը
*երեխան սովորում է ազատ կերպով արտահայտել իր գաղափարները,պատկերացումները
* սովորեում է աշխատել տարբեր տեսակի նյութերով
*զարգանում է գունազգացոխությունը
*զարգանում է դաստակի շարժումները և ձեռքի մատների մանր մկանների ` մանր մոտորիան
*զարգացնում է ստեղծագործականությունը,երևակայուրթյունը
*նպաստում է մտքի թռիչքի զարգացմանը
*աշխատելիս երեխաները ստանում են գեղագիտական հաճույք:
Ոչ ավանդական մեթոդիկայի տեխնիկաների բոլորը ձևերը սեր են ներշնչում կերպարվեստի նկատմամբ: Մանկապարտեզում նկարչության ոչ ավանդական տեխնիկան արժանի է մեծ ուշադրության,քանի որ այն նույնպես շատ մեծ դեր ու նշանակություն ուն յուրաքանչյուր երեխայի զարգացման համար:
Նախադպրոցական տարիքի երեխաների նկարները վերլուծելուց հետո,կարելի է գալ այն եզրահանգման ,որ պետք է հեշտացնել նկարչության պարապմունքներին տրված թեմաները ,քանի որ կան այնպսիս թեմաներ,որ նույնիսկ մեծահասկը չի կարող պատկերել պահանջվածը,և երեխան արդեն սկսում է վախենալ,որ չի ստացվի ,չի կարողանա պատկերել պահանջվածը:

Գոյություն ունեն նկարչության տարբեր տեսակի ոչ ավանդական տեխնիկաներ ՝ դրանց անսովորությունը կայանում է նրանում ,որ երեխային թույլատրվում է արագ հասնել ցանակլի արդյունքին ՝ ազատ և անկաշկանդ կատարել տվյալ աշխատանքը:
Պատկերների ոչ ավանդական տեխնիկայի կիրառմամբ արտացոլումը երեխաների մոտ առաջացնում է իսկական ուրախություն և ավելի հեշտ են կատարում աշխատանքը ,քան սովորական նկարչության պարապմունքի ընթացքում:Կարելի է ասել երեխաները վայելում են ամբողջ աշխատանքի կատարման ընթացքը:
Գրեթե բոլոր նկարչության պարապմունքներ ժամանակ թեման լսելուց հետո առաջին բանը ,որ ասում են երեխաները դա <<չեմ կարող>>-ն է,որովհետև նրանց թվում է ,որ դա բարդ է և իրենք չեն հասնի հաջողության:Երեխները չունեն այն ինքնավստահությունը,որն ակամա առաջանում է այս մեթոդիկայով նկարելու ընթացքում,ամեն երեխա կարծես իրեն զգում է որպես մի փոքրիկ նկարիչ:
Երեխային պետք է թույլ տալ ընտրել այն առարկան որով ինքնէ ցանկանում նկարել,պետք է ուշադիր ուսումնասիրել տվյալ առական,առանձնացնել դրա հիմնական մասերը և հետո նոր միայն փորձել այն պատկերել:Հիմնականում երեխաները նկաոում են իրենց երևակայությամբ,և հնարավոր է ,որ այն ընդհնարապես նման չլինի տվյալ աակային կամ երևույթին,հարկավոր թ չքննադատել և չքննարկել երեխայի աշխատանքը,այլ պետք է միայն քաջալերել ու խրախուսել:
Երեխաները սիրում են ամեն բան պատկերել ոչ ստանդարտ,ոչ ավանդական ձևերով և հենց դրանով էլ ապացուցվում է ,որ յուրաքանչյուր երեխա ունի իր անհատականությունը,և դա խոսում երեխայի նախաձեռնողականության և ինքնուրույնության մասին:
Ոչ ավանդական նկարչության մեթոդով աշխատելը նպաստում է երեխայի
* տեսողության զարգացմանը,
* կարողանում է կողմնորոշվել տարածականորեն՝ թղթի վրա որ մասում պետք է նկարել և դա էլ իր հերթին նպաստում է տեսողական ընկալմանը,
*ուշադրության զարգացմանը
* կենտրնացմանը
* ինքնատիրապետման զարգացմանը :
Երեխաների համար ստեղծագործական գործընթացը իսկական հրաշք է,եթե դիտեք թե ինչպես են երեխաները նակրելու ընթացքում հայտնաբերում իրենց յուրահատկությունները:Այս եղանակով նկարելու ընթացքում երեխաները հասկանում են,եր սխալվելը նպատակին հասնելու մի միջոց է այլ ոչ թե խոչընդոտ:
Նկարչության մեջ չկա ճիշտ կամ սխալ ճանապարհ ՝ այս գաղափարը պետք է սերմանել յուրաքանչյուր երեխայի մեջ:

Յուրաքանչյուր երեխա պետք է նկարի այնպես ինչպես ինքը զգում և տեսնում է տվյալ երևույթը կամ առարկան,պետք խրախուսել յուրաքանչյուր տեսակի աշխատանք ,որպեսզի երեխան ձգտի աշխատել ինքնուրույն,անվախ,նախաձեռնողկանությունը վերցնի իր ձեռքը ու աշխատի այնպես ինչպես կարողանում է:
Պարապմունքների ընթացքում կարելի է օգտագործել հնարքներ,որոնք կնպաստեն երեխաների ավելի լավ աշխատելուն,օրինակ ՝ խաղ ՝ որը երեխաների առաջատար գործունեությունն է,կամ որևէ հեքիաթի հերոսի ,սիրված կերպարի անակնկալ այց,առ հրավիրում է երեխաներին մեկնել իր հետ հետաքրքիր ճանապարհորդության,կամ երաժշտական նվագակցություն և այլն:Բացի դա ,կարելի է երեխաներին ցույց տալ և

բացատրել ,թե ինչպես կարելի է ստանալ անհրաժեշտ պատկերը:
Կարելի է օգտագործել `
* մատնային նկարչությունը,
* դրոշմ կարտոֆիլի կնիքներով
* խոզանակով
* մոմե մատիտներով և ջրաներկով
* մոմով և ջրաներկով
* չոր տերևներ տպելու եղանակով
* ձեռքերի ափերին կերկելով ր տպելով
* ճմրթաշ թխթերով և այլն:
Նշված բոլոր տեխնիկաներով աշխատելը խաղ է ,որը թույլ է տալիս երեխային աշխատել ավելի հանգիստ և ինքնավստահ:
Նկարչության ոչ ավանդական տեխնիկաներով նկարելու միջոցով երեխաների մոտ առաջանում է համառ հետաքրքրություն արվեստի նկատմամբ:
Մեզանից յուրաքանչյուրի ներսում ապրում է փոքրիկ նկարիչ,որի մասին մենք ոչ մեկս չգիտենք:Դրա համար շատ կարևոր է բացահայտել յուրաքանչյուր երեխայի թաքնված տաղանդը:Եվ պետք է միշտ հիշել ,որ չկան անտաղանդ երեխաներ ,այլ կան դեռ չբացահայտված երեխաներ և մենք մեծահասակներս պետք է օգնենք երեխաներին բացահայտել այդ թաքնված տաղանդները:
Ինչպես ասել է Վ.Ա.Սուխումլինսկին <<Երեխաների կարողությունների և հմտությունների ակունքները իրենց մատների վրա են,ավելի պատկերավոր ասած որքան շատ հմտություն ունի երեխան այնքան ավելի խելացի է>>:
Այսպիսով կարող ենք ասել,որ շատ կարևոր դեր ունի ոչ ավանդական նկարչությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում:Այն տալիս է երեխաներին `
* գեղագիտական հաճույք ` գործունեության ընթացքից և վերջնարդյունքից
* մանր մոտորիկայի ,մանր մկանների զարգացում:
* մտքի թռիչք
* երևակայություն
* նոր եղանակներ գտնելու և ստեղծագործելու դրդապատճառներ
* ձևաորել շրջապատող աշխարհի վերաբերյալ պատկերացումներ
* ազատության զգացում
* խիզախություն
* գունազգացողություն
* ընդլայնում է միտքը
* խթանում է մտածողության զարգացմանը ստանդարտներից դուրս ստեծագործելու միջոցով
* ինքնավստահության զգացում
* նախաձեռնողականություն:

Մենք գիտենք,որ երեխաների հոգեկան գորշընթացների,հոգեբանական ախտորոշումն իրականցվում է հենց նկարչության միջոցով:Հատուկ մեթոդիկաների և տեխնիկաների միջողով հնարավոր է պարզել ,թե որքան զարգացած են նախադպրոցական տարիքի երեխաների ֆանտազիան,երևակայությունը ,օրինակ ՝ գոյություն չունեցող կենդանի մեթոդով:Եվ շատ ուրիշ գործընթացներ ուրիշ մեթոդներով:
Ավելորդ կլինի նշելը ,որ ոչ ավանդական նկարչության մեթոդիկան արդիական է և ընդունված է բոլոր տեղերում:
Ի տարբերություն ավանդական նկարչության ,ոչ ավանդական նկարչությունը երեխային հնարավորություն է տալսի ցույց տալեւ իր սեթական ունակությունները,ստեղծագործականությունը,երևակայությունը,երեխան աշխատում է գույնի հետ,սովորում է գույներն իրար խառնել և ստանալ նոր ու ավելի հետաքրքիր գույներ,զարգանում է գեղագիտական ճաշակը:
Ոչ ավանդական նկարչությունը հանգստացնում է երեխաներին և ոգեշնչում է ,նպաստում է համառության զարգացմանը աշխատանքի մեջ,խթանում է ոչ ստանդարտ լուծումների որոնմանը:Այլընտրանքային ՝ ոչ ավանդական նկարչությունն այն է, ինչ նախադպրոցական տարիքի երեխային թույլ է տալիս լինել ազատ և ինքնուրույն և սեփական ուժերի վրա հիմնվելով հասնել ցանկալի և անհևաժեշտ արդյունքի:Իսկ ազատ և ինքնուրույն ստեղծագործելու հնարավորությունը շատ կարևոր է երեխաների երևակայության և մտածողության զարգացման գործում:
Երբ նախադպրոցական տարիքի երեխան նկարում է ՝ նա թղթին է հանձնում այն ամենն ինչ պատկերացնում է ,բայց բառերով արտահայտել չի կարողանում:
Կերպարվեստային գործունեության ընթացքում կատարելագործվում են նախադպրոցական տարիքի երեխայի բոլոր հոգեկան գործընթացները,ֆունկցիաները տեսողական ընկալումը,պատկերացումը,երևակայությունը,հիշողությունը,մտածողությունը:
Այս տեսակի գործունեության մեջ չկա <<ոչ>> բառը որտեղից էլ հենց սկսվումէ երեխայի ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը,ինչպես նաև ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը:
Ոչ ավանդական մեթոդիկայի հեշտ տեխնիկաներից է մատնային նկարչությունը:Այն իրենից ներկայցնում է մատը ներկի մեջ մտցնել և թաթախելու միջոցով թղթի վրա ստանալ տարբեր պատկերներ ՝ կենդանիներ,ծաղիկներ և այլն:Այս աշխատանքից երեխաները շատ են ոգևորվում և ուրախանում:Ես փորձեցի կատարել նման մի աշխատանք և կներկայացնեմ այն նկարներով:

SUPER RACING

SUPER RACING

Եզրակացություն

Այսպիսով կարող եմ ասել ,որ նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում շատ մեծ դեր ունի ոչ ավանդական է այլընտրանքային նկարչությունը:Այս մեթոդիկայի օգտագործումը հնարավորություն է տալիս երեխային զարգացնել ստեղծագործական,գեղարվեստական մտածողություն ,այլ ոչ թե կարծրատիպային: Նշանակություն չունի,թե որ երեխան,որքանով է տիրապետում նկարելուն,այստեղ կարևոր է երեխներին սովորեցնել արտահայտել իրենց մտքերն ու զգացմունքները թղթի վրա ,փոխանցել իրանց տրամադրությունը և պատկերացումները տարբեր տեսակի առարկաների կամ երևույթների վերաբերյալ:
Ոչ ավանդական նկարչությունը նպաստում է ոչ միայն երեխայի երևակայական մտածողության զարգացմանը այլ նաև ինքնատիրապետմանը,համառությանը,ինքնուրույնությանը,տեսողական ընկալմանը,տարածական կողմնորոշմանը,տարբեր տեսակի փոքրիկ կամ անպետք թվացող իրերով հետաքրքիր աշխատանքների ստացմանը:
Իմ աշխատանքի ընթացքում համոզվել եմ,որ երեխաները շուտ են հոգնում և ձանձրանում են միապաղաղությունից,այս մեթոդիկան օգնում է ոչ միայն բարձրացնել տրամադրությունը,,այլ նաև աշխարհին այլ աչքով նայելու հնարավորություն է տալիս:
Հենց այս մեթոդն այն մեթոդն է,որն օգնում է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն:Այս տեսակի նկարչությունն ինքնարտահայտման հիանալի գործիք է:Որքան բազմազան լինեն ստեղծագործական միջավայրի ձևավորմանը նպաստող պայմանները,այնքնան ավելի վառ կդրսևորվեն նախադպրոցական տարիքի երխաների գեղարվեստական կարողությունները:
Ոչ ավանդական նկարչությունը լայն լայն շրջանակ է բացում երեխաների երևակայության զարգացման համար,հնարավորություն է տալիս երախային ավելի խորը ներգրավվել ստեղծագործական գործունեության մեջ,և այդ միջոցով ցույց տալ սեփական անհատականությունը:Այսպիսով պետք է շատ մեծ ուշադրություն դարձնել մանկապարտեզում նկարչության ոչ ավանդական մեթոդիկայի վրա ,քանի որ ինչպես արդեն տեսանք դրա դերը անփոխարինելի է նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման գործընթացում:

Գրականության ցանկ

1.Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը միջին խմբում>> ուսումնամեթոդական ձեռնարկ
2.Լ.Սմբատյան,Լ.Վերդյան <<Կերպարվեստի պարապմունքներ միջին խմբի համար>>
3.Ժ.Ավետիսյան <<Ոչ ավանդական նկարչություն>>
4.Ժ.Ավետիսյան,Գ.Փոթիկյան «Ոչ ավանդական նկարչություն»
5. thestrip.ru- https://thestrip.ru/hy/karandash/netradicionnye-tehniki-risovaniya-dlya-detei-doshkolnogo-vozrasta/